



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2014թ. յունիսի 23-ի թիվ 33/1

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԿԵՆՍԱԹՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական
ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման
գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի
2011թ. դեկտեմբերի 23-ի թիվ 33/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏԱՍՔ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի մարտի 21-ի թիվ 10/2 որոշում (նոր թեմա):

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի արդյունավետությունը և համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով սոցիալական ծրագրերի գծով վճարումների իրականացումն ապահովող ընթացակարգեր և գործառույթներ:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն:

Վերահսկողության ծավալը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր (համաձայնագրեր), «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի միջոցով վճարվող կենսաթոշակատուների հաշվառման, նրանց ցուցակների և տվյալների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման ու անձնական հաշիվների վարման գործընթացներ, սոցիալական ծրագրերի գծով վճարումների իրականացման հասցեականությունն ապահովող միջոցառումներ, ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին կատարված ծախսեր, ինչպես նաև կենսաթոշակների վճարումներից հետո վերադարձված ավելացած գումարներ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2011 թվականի ապրիլի 4-ից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 1-ը:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակաշրջանը՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև վերահսկողության իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են համապատասխանության և կատարողական վերահսկողության տեսակները, դիտարկման և վերլուծության ձևերը, որը պայմանավորված է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում կենսաթոշակառուների վերաբերյալ տեղեկատվական բազայի և նրանց առանձնացված հաշվառման բացակայությամբ: Վերահսկողության մեթոդներից կիրառվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի և հաշվետվությունների, կամոնադրությունների և պայմանագրերով (համաձայնագրերով) ամրագրված գործառույթների, ընթացակարգերի ու գործընթացների ուսումնասիրությունը: Վերլուծության փուլում ամփոփվել է ստացված տեղեկատվությունը:

Վերահսկողության արդյունքները՝

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) միջոցով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հետևյալ վճարումները՝

- 2008 թ. վճարվել է 10,827.7 մլն դրամ, կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 31200 մարդ.

- 2009 թ. վճարվել է 13,248.1 մլն դրամ, կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 33050 մարդ.

- 2010 թ. վճարվել է 14,834.6 մլն դրամ, կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 35430 մարդ.

- 2011 թ. 1-ին կիսամյակում վճարվել է 8,530.8 մլն դրամ, կենսաթոշակառուների միջին ամսական թիվը կազմել է 39320 մարդ:

Մինչև 2011 թ. հունվարի 1-ը սոցիալական ծրագրերի գծով (կենսաթոշակ, պատվովճար, դրամական օգնություն և այլ սոցիալական ծրագրերի գծով վճարումներ) վճարումները բանկերի միջոցով իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) և Բանկի միջև 28.11.2001 թ. կնքված «Ծառայությունների վճարովի մատուցման մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա անբաժանելի մասը կազմող՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համաձայնագրերի (այսուհետ՝ համաձայնագիր) հիման վրա:

Պայմանագրի (համաձայնագրերի) ուսումնասիրությամբ արձանագրվել են հետևյալ ռիսկերը և թերությունները՝

• Բանկի կողմից վճարվող կենսաթոշակառուների առանձնացված հաշվառման և նրանց տվյալների բազայի ստեղծման վերաբերյալ Պայմանագրում որևէ պահանջ չի ամրագրվել և

գործնականում չի իրականացվել, որի հետևանքով հնարավոր չէ գնահատել ինչպես կենսաթոշակառուների իրական թիվը: այնպես էլ ՀՀ պետական բյուջեից կատարված ծախսերի իսկությունն ու հասցեականությունը: Ընդ որում, նման հաշվառման պահանջ չի պարունակվել նաև Բանկի ներքին իրավական ակտերում:

- Ըստ պայմանագրի՝ վճարումների ցուցակում պետք է նշվեին միայն կենսաթոշակառուի անուն- ազգանունը, անձնական հաշվի համարը, վճարման ժամանակաշրջանը և վճարման ենթակա գումարը, որը բավարար հիմքեր չի ստեղծում վճարված կենսաթոշակառուի անձը ճշտելու համար: Ավելին, Պայմանագրով չեն նախատեսվել կենսաթոշակառուների ցուցակների և նրանց տվյալների փոխադարձ ճշտումներ, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ ցուցակների և դրանցով կատարված վճարումների անճշտությունների համար:

- Պայմանագրով չեն նախատեսվել նաև կենսաթոշակառուների տվյալների բազայի ստեղծման, վարման և պահպանման հետ կապված դրույթներ, որի արդյունքում նախորդ տարիներին վճարված անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը Բանկում բացակայում է:

Մասնավորապես, համաձայն Բանկի կողմից ներկայացված տեղեկանքի՝ 01.01.2008.- 01.09.2009 թթ. ընկած ժամանակահատվածում, երբ կենսաթոշակառուների ցուցակները կազմվել են թղթային տարբերակով, Ծառայության կողմից սոցիալական ծրագրերի գծով վճարումներ ստացող անձանց ցուցակը թղթային տարբերակով ստանալուց և վճարումներն իրականացնելուց հետո Բանկի մասնաճյուղերն այդ ցուցակները (ռեեստրները) վերադարձրել են Ծառայության համապատասխան տարածքային բաժիններին՝ առանց համապատասխան հաշվառում կատարելու: Ընդ որում, երկուստեք խախտվել է Պայմանագրի 2.2. կետի պահանջը՝ ըստ որի Բանկի մասնաճյուղերին թղթային տեսքով ցուցակների հետ մեկտեղ պետք է տրամադրվեին տվյալներ նաև էլեկտրոնային կրիչներով:

Բանկի կողմից կենսաթոշակառուների առանձնացված հաշվառում չի իրականացվել նաև 01.09.2009-01.01.2011 թթ. ընթացքում՝ վճարումների ավտոմատացված և կենտրոնացված համակարգին անցնելուց հետո, երբ ցուցակներն էլեկտրոնային տարբերակով վճարման են ներկայացվել Ծառայության կողմից անմիջապես Բանկի գլխամասային գրասենյակ:

Վերահսկողության շրջանակներում Բանկից պահանջվել են 2008-2010 թթ. Բանկի ծառայություններից օգտվող կենսաթոշակառուների ցուցակները և նրանց վերաբերյալ տվյալները, սակայն ստացվել են միայն 2009 թ. սեպտեմբերից հետո կազմված ցուցակներն էլեկտրոնային կրիչով՝ այն էլ Ծառայության կողմից ներկայացված տարբերակով:

Բանկի կողմից վճարվող կենսաթոշակառուների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով համապատասխան մամակ է ուղարկվել նաև ՀՀ կենտրոնական բանկ, որը 26.07.2011 թ. պատասխան գրությամբ հաստատել է, որ Ծառայության հետ կնքված Պայմանագրով Բանկը որևէ պատասխանատվություն չի

ստանձնել Ծառայության կողմից ներկայացված ցուցակներում առկա տեղեկատվությունը կառուցվածքային/կանոնակարգված տեսքով մուտքագրելու իր ավտոմատացված բանկային համակարգ: Ընդ որում,, ուսումնասիրությունները, ինչպես նաև Ծառայության տեղեկատվական բազայի համադրումը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում առկա տեղեկատվությամբ ցույց են տվել, որ բազմիցս կենսաթոշակառուների տվյալները չեն իդենտիֆիկացվում (թոշակառուին վճարումները կատարվել են անվավեր անձնագրային տվյալների հիման վրա, ինչպես նաև՝ նույն անձնագրով, սակայն տարբեր անուն, ազգանունով անձանց):

Այսպիսով, Բանկի կողմից կենսաթոշակառուների հաշվառում չի իրականացվել, որը բույլ չի տալիս իդենտիֆիկացնել (նույնականացնել) նրանց տվյալները, իսկ նշված տվյալների բացակայության պայմաններում հնարավոր չէ նաև գնահատել վճարման ենթակա կենսաթոշակառուների թվի, վճարումների և տեղեկատվական բազա մուտքագրվող այլ տվյալների վերաբերյալ իրական պատկերը:

Ելնելով վերահսկողության արդյունավետությունը պայմանավորող վերը նշված տեղեկատվությունը տրամադրելու անհրաժեշտությունից, ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել է նախորդ ժամանակահատվածում վճարված կենսաթոշակառուների ցուցակների (ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակով) վերականգնման համար պահանջվող ժամանակի փորձնական հաշվարկ, ըստ որի այդ պահանջվող տեղեկատվությունը հնարավոր չէ ներկայացնել ողջամիտ ժամկետներում: Այսպես, միայն Բանկի Ծաղկահովիտի մասնաճյուղի կողմից վճարված թվով 300 կենսաթոշակառուի 2008 թ. հունվարի 1-ից մինչև 2011 թ. մարտ ամիսը ներառյալ կենսաթոշակառուների տվյալների մշակման և ուսումնասիրման համար աշխատաժամանակի և մարդկային ռեսուրսների հաշվարկային թիվը կազմում է 1175 մարդ/ժամ, կամ 4 աշխատակցի զուգահեռաբար աշխատելու պարագայում շուրջ 40000 կենսաթոշակառուի տվյալները հնարավոր կլինի վերականգնել 1014 աշխատանքային օրում (կամ ավելի քան 4 տարվա ընթացքում):

- Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար հստակ պատժամիջոց չի նախատեսվել, որով նախադրյալներ են ստեղծվել չօգտագործված բյուջետային միջոցները ժամկետների խախտմամբ ՀՀ պետական բյուջե հետ վերադարձնելու համար: Այսպես, միայն 2009 թվականի ընթացքում Բանկի կողմից ՀՀ պետբյուջե ժամկետի ուշացումով է վերադարձվել շուրջ 1.500.0 մլն դրամ, որի դիմաց տույժեր չեն կիրառվել:

2011 թ. հունվարի 1-ից գործող Պայմանագրով խստացվել են վճարումների ցուցակների նկատմամբ պահանջները՝ կապված կենսաթոշակառուների անձի իդենտիֆիկացման համար անհրաժեշտ տվյալների ապահովման հետ: Պայմանագրի համաձայն՝ Ծառայության և Բանկի համար որպես պարտադիր են համարվում կենսաթոշակառուի հետևյալ տվյալները՝ կենսաթոշակառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, առկայության դեպքում՝ կենսաթոշակառուի

փոխարեն կենսաթոշակն ստանալու օրենքով այդ իրավունքն ունեցող անձի անունը, ազգանունը, հայրանունը և նրա անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, կենսաթոշակառուի բանկային հաշվի համարը, վճարման ենթակա կենսաթոշակի գումարը՝ ըստ ժամանակահատվածի և տեսակների, վճարման ենթակա ընդհանուր գումարը: Միաժամանակ, Բանկի կողմից վերանայվել և ընդունվել է ֆիզիկական անձանց բանկային հաշիվների հետ աշխատանքի նոր կարգը, որում տեղ են գտել նաև հիշատակված պահանջների ապահովմանն առնչվող միջոցառումներն ու դրույթները: Սակայն Պայմանագրում Բանկի կողմից կենսաթոշակառուների տվյալների բազայի ստեղծմանն ու պահպանմանը, նրանց հաշվառմանը ինչպես նաև ցուցակներում առկա տվյալների փոխադարձ ճշտումներին վերաբերող պահանջներ այդպես էլ չեն ամրագրվել:

Վերահսկողության ընթացքում, 2011 թ. ապրիլից՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները, Բանկի կողմից սկսվել և շարունակաբար իրականացվում է սպասարկվող կենսաթոշակառուների տվյալների բազայի ստեղծման և նրանց առանձնացված հաշվառման գործընթացը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից 2008-2011 թթ. կենսաթոշակների վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է բազմաթիվ թերություններով ու բացթողումներով, որը թույլ չի տալիս օբյեկտիվորեն գնահատել նախատեսված պայմանագրային պարտավորությունների կատարման մակարդակը:

- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից վճարվող կենսաթոշակառուների առանձնացված հաշվառման, նրանց տվյալների բազայի ստեղծման վերաբերյալ պայմանագրում որևէ պահանջ չի ամրագրվել, որի հետևանքով հնարավոր չէ որոշել կենսաթոշակառուների իրական թվաքանակը և ՀՀ պետական բյուջեից կատարված ծախսերի իսկությունն ու հասցեականությունը:

- Պայմանագրով չեն նախատեսվել նաև կենսաթոշակառուների ցուցակների և նրանց տվյալների փոխադարձ ճշտումներ, ինչպես նաև պատասխանատվության միջոցներ՝ նշված ցուցակների և դրանցով կատարված վճարումների անճշտությունների համար:

- Անհրաժեշտ տվյալների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել վճարման ենթակա կենսաթոշակառուների թվի, վճարումների և տեղեկատվական բազա մուտքագրվող այլ տվյալների վերաբերյալ իրական պատկերը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տեղեկատվական բազայի համադրումը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում առկա տեղեկատվությունը հետ ցույց է տվել, որ բազմիցս կենսաթոշակառուների տվյալները չեն նույնականացվում (կենսաթոշակառուին վճարումները

կատարվել են անվավեր անձնագրային տվյալների հիման վրա, ինչպես նաև նույն անձնագրով, սակայն տարբեր անուն, ազգանունով անձանց):

- Պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար հստակ պատժամիջոց չի նախատեսվել, որով նախադրյալներ են ստեղծվել չօգտագործված բյուջետային միջոցները ժամկետների խախտմամբ ՀՀ պետական բյուջե հետ վերադարձնելու և դրանք բանկի նպատակներին ուղղելու համար:

- Չնայած 2011 թ. հունվարի 1-ից գործող Պայմանագրով խստացվել են վճարումների ցուցակների նկատմամբ պահանջները՝ կապված կենսաթոշակառուների անձի իդենտիֆիկացման համար անհրաժեշտ տվյալների ապահովման հետ, սակայն «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից կենսաթոշակառուների տվյալների բազայի ստեղծմանն ու պահպանմանը, նրանց հաշվառմանը, ինչպես նաև ցուցակներում առկա տվյալների փոխադարձ ճշտումներին վերաբերող պահանջներ այդպես էլ չեն ամրագրվել:

- «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի կողմից 2011 թ. ապրիլ ամսից սկսվել է սպասարկվող կենսաթոշակառուների տվյալների բազայի ստեղծման և նրանց առանձնացված հաշվառման գործընթացը, որը պայմանավորված է վերահսկողության ընթացքում բարձրացված հարցադրումներով և ներկայացված առաջարկություններով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը՝

- Ելնելով վերահսկողության արդյունքներից և հաշվի առնելով բանկային համակարգի միջոցով կենսաթոշակների վճարման ծավալների ավելացման, ինչպես նաև համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպությունների քանակի ավելացումը՝ վերանայել և արդիականացնել առևտրային բանկերի հետ կնքված պայմանագրերը:

- Որպես պարտադիր պայման պայմանագրերում ամրագրել բանկերի կողմից սպասարկվող կենսաթոշակառուների առանձնացված հաշվառման, նրանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման, դրա անընդհատ թարմացմանն ու պահպանման պահանջը:

- Առանձին ուշադրություն դարձնել վճարման նպատակով ներկայացված կենսաթոշակառուների ցուցակներում առկա տվյալների փոխադարձ ճշտումներին և պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ թերի կատարելու համար կոնկրետ պատժամիջոցների ամրագրման հարցերին:

- Ծարունակաբար կատարելագործել տարածքային բաժինների կողմից կենսաթոշակառուների տվյալների ճշգրտման և նախկինում արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցները՝ բացառելով չնույնականացվող տվյալներով կենսաթոշակառուների առկայությունը:

- Ապահովել առևտրային բանկերի միջոցով իրականացվող վճարումների նկատմամբ վերհսկողական գործառույթների լիարժեք և արդյունավետ իրականացումը, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվող վճարումների նպատակայնությունն ու հասցեականությունը, չվճարված ֆինանսական միջոցների ժամանակին և ամբողջ ծավալով հետ վերադարձը ՀՀ պետական բյուջե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« _____ » 2012 թ.

N _____

Ձեռ 09.01.2012թ. N 02/23.14/1-12

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
պարոն Դ. Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշման՝ Ձեզ եմ ուղարկում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 33/1 որոշումը, ինչպես նաև հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքը:

Առդիր՝ 10 էջ:

Հարգանքներով՝

Ա. Գրիգորյան

Կատ.՝ կենսաթոշակային ապահովության վարչություն
010 52 04 48

Տեղեկանք

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33/1 որոշմամբ հաստատված` ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության և կենսաթոշակների անկանխիկ վճարման ծառայություններ մատուցող առևտրային բանկերի հետ կնքված համաձայնագրերով սահմանվել է կողմերի միջև կենսաթոշակների անկանխիկ վճարումն ապահովող անհրաժեշտ տեղեկատվության փոխանակության կարգը, որի համաձայն հստակեցվել են կենսաթոշակների վճարման էլեկտրոնային ցուցակների ձևաչափերը, ամրագրվել են դրանց տրամադրման կարգը, ժամկետները և սահմանվել են գործընթացը կանոնակարգող այլ պայմաններ:

Պետական կենսաթոշակային համակարգում առկա խնդիրներին լուծումներ տալու նպատակով` Ծառայության կողմից ձեռնարկվել են պետական կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրառման օրինականությունն ապահովելու, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառված անհատական տվյալները ճշգրտելու և ամբողջացնելու, ինչպես նաև կենսաթոշակային համակարգի զարգացմանն ուղղված առաջնահերթ համալիր միջոցառումներ: Արդյունքում` տեղեկատվական տարբեր համակարգերի շտեմարանների հետ իրականացված անհրաժեշտ համադրումների, վերլուծությունների, ինքնաշխատ եղանակով կատարված անհրաժեշտ ճշգրտումների հիման վրա, ներկայումս բացառվում է չճանաչված (ոչ իդենտիֆիկ), ինչպես նաև չնույնականացված այլ տվյալներով անձանց առկայությունը կենսաթոշակների վճարման ցուցակներում:

Միաժամանակ, բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի նկատմամբ իրականացվող հսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով` ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 11-ի N 670-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (նախագիծը հավանության է արժանացել մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի նիստում), որի համաձայն կենսաթոշակների վճարման ցուցակները բանկերին են տրամադրվելու գանձապետարանի միջոցով:

Վերոնշյալ որոշումն ընդունվելուց հետո համապատասխան փոփոխություններ կկատարվեն բանկերի հետ կնքված պայմանագրերում և համաձայնագրերում:

Ծառայության պետի համապատասխան հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից կենսաթոշակ վճարելու ընթացակարգը, որի համաձայն կարգավորվել է



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« _____ » 2012 թ.

N _____

Կենսաթոշակների և սոցիալական ապահովության այլ ծրագրերով նախատեսված դրամական վճարների գումարների վճարման ամբողջական գործընթացը, այդ թվում՝ նկարագրվել են անկանխիկ եղանակով վճարվող կենսաթոշակների վճարման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները, կենսաթոշակի գումարի ֆինանսավորման և վճարման ընթացակարգերը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (010) 52 45 74, ֆաքս՝ (010) 52 15 94,
Էլ. փոստ՝ info@social.am, ինտ. կայք՝ www.social.am

N _____

"__" _____ 20__

Ձեռք 23.01.2013թ. N 02/23.16/795-13

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ Ձեզ եմ ուղարկում ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33/1 որոշմամբ հաստատված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների կատարման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

Ա. Աբրահամյան

Կատ. Սմբատ Սախյան
Հեռ. 010 511 401

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 33/1 որոշմամբ հաստատված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից բանկերի միջոցով կենսաթոշակների վճարման գործընթացի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների կատարման վերջնական արդյունքների վերաբերյալ

Կենսաթոշակները անկանխիկ եղանակով (բանկերի միջոցով) վճարելու ընթացակարգերը սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ, ի կատարումն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, սահմանված են կենսաթոշակ վճարելու կարգը, ինչպես նաև լիազոր մարմնի և բանկի միջև կնքվող՝ կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված օրինակելի պայմանագրի հիման վրա առանձին պայմանագրեր են կնքված 16 բանկերի հետ, ինչպես նաև, ի կատարումն պայմանագրի 2.2-րդ կետի, բանկերի հետ կնքված համաձայնագրերով կարգավորված են բանկի և ծառայության միջև տեղեկատվության փոխանակության ընթացակարգերը, այդ թվում՝ բանկային հաշիվ բացած կենսաթոշակառուի տվյալների համադրումը (ճշտումը), բանկի կողմից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տարեկան մեկ բանկ ներկայանալու (չներկայանալու) մասին տեղեկատվության տրամադրումը Ծառայությանը, յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակի վճարման ցուցակների փոխանցումը բանկին և այլն:

Համաձայն փոխհամաձայնեցված կարգի՝ բանկի և ծառայության միջև տեղեկատվության փոխանակությունը իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ CBANet համակարգի միջոցով: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս պահպանել փոխանակվող տեղեկատվությունը սկզբնական վիճակով՝ բացառելով որևէ փոփոխություն կատարելու հնարավորությունը փոխանակված ֆայլերում:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման մեջ ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 2-ի N 184-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների համաձայն՝ նախատեսվում է անկանխիկ եղանակով կենսաթոշակի

վճարումն իրականացնել (կենսաթոշակը կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցել) գանձապետական համակարգի միջոցով:

Սահմանված (կիրարկվող) ընթացակարգերի շրջանակներում էապես բարձրացել են գործընթացի թափանցիկությունը և վերահսկելիությունը, ինչպես նաև՝ նվազագույնի է հասցվել ոչ հասցեական վճարումների հնարավորությունները:

Մասնավորապես, տեղեկատվության փոխանակության գործող կառուցակարգերի շրջանակներում կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բացառապես այն դեպքում, երբ բանկի տրամադրության տակ գտնվող և կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական համակարգում առկա՝ կենսաթոշակառուի վերաբերյալ տվյալները նույնական են՝ բացառելով չնույնականացվող տվյալներով կենսաթոշակառուներին կենսաթոշակ վճարելը (անհամապատասխանությունների առկայության դեպքում կենսաթոշակը վճարվում է դրանք վերացվելուց հետո):

Գործող ընթացակարգի շրջանակներում լուծվել է նաև չվճարված կենսաթոշակի գումարները ՀՀ պետական բյուջե ետ վերադարձնելու խնդիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենսաթոշակն անկանխիկ եղանակով համարվում է վճարված կենսաթոշակառուի բանկային հաշվին փոխանցվելու դեպքում, իսկ պայմանագրի համաձայն՝ բանկին փոխանցված գումարները կենսաթոշակառուի բանկային հաշվին են մուտքագրվում բանկի կողմից դրանք ընդունելու օրվան հաջորդող բանկային օրվա ընթացքում:

Մասնավորապես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման համաձայն՝ սխալ (ավել) վճարված կենսաթոշակի գումար է համարվում կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար վճարված կենսաթոշակների գումարները, որոնք ենթակա են վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ծառայության կողմից համապատասխան պահանջագիր ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ: Ընդ որում, պետական կենսաթոշակային ապահովության համակարգի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տվյալների շտեմարանի շրջանակներում կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար կենսաթոշակի գումար վճարված լինելը ճշտվում է նաև ինքնաշխատ եղանակով (մահվան ամսաթիվը տվյալների շտեմարան մուտքագրելիս):

Հարկ է նաև նկատի ունենալ, որ սկսած 2012 թվականի հունիսի 1-ից կենսաթոշակի անկանխիկ վճարման՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերը կիրառվում են նաև զինվորական կենսաթոշակների վճարման գործընթացում:

Միաժամանակ, անկանխիկ եղանակով կենսաթոշակը վճարելու գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը նվազեցնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

Մասնավորապես, առաջիկայում, պետական կենսաթոշակային ապահովության համակարգի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տվյալների շտեմարանի շրջանակներում նախատեսվում է էլ ավելի կատարելագործել գործընթացը, մասնավորապես, տարածքային բաժնի կողմից շտեմարան մուտքագրվող՝ կենսաթոշակառուի բանկային հաշվի համարը ճշտել առցանց եղանակով:

Միաժամանակ, նախատեսվել էր 2012 թվականին ներդնել սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգից ինքնաշխատ եղանակով տվյալներ ստանալու ենթահամակարգ, որը հնարավորություն կտար կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու գործընթացում կիրառել նաև կենսաթոշակառուի կողմից սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունը՝ էլ ավելի բարձրացնելով պետական վերահսկողության արդյունավետությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն իսկ ընթացքի մեջ էին ՀՀ կառավարության հանձնարարությամբ ՄԷԿՏ համակարգում համապատասխան փոփոխությունների իրականացումը՝ ՄԷԿՏ համակարգից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ինքնաշխատ եղանակով տվյալներ տրամադրելու ենթահամակարգի ներդրումը նախատեսվում է իրականացնել 2013 թվականին: